ԴԱՏԱՎՈՐԱՑ ԳԻՐՔ

Վեցերորդ հաղորդում

Դատավորաց գրքի խորքային նշանակությունը և Իսրայելի ուրացությունը Աստծուն երկրպագելու մեջ

Գրվածքների ընթերցում. Դտվ 1:1, 2:1, 17:1-5, 18:1, 30-31, Բ Թսղ 2:2-3, Բ Պտ 1:3-21, 2:1, 15

I. Մենք պետք է իմանանք Դատավորաց գրքի խորքային նշանակությունը.

Ա. Այն, որ Դտվ 1:1-20-ում Իսրայելը հարցնում էր Եհովային, նկարագրում է Իսրայելի՝ Աստծուն ապավինելու գեղեցիկ տեսարանը. Տիրոջ հետ միասնության այս սքանչելի նկարը, որը նախապատկերում է Աստծու օրգանական միությունն Իր մարդկանց հետ, Հեսուի գրքում եղող միասնության շարունակությունն է, երբ Իսրայելի ժողովուրդը բարի երկիրը մտավ, ինչպես նկարագրված է Հեսուի գրքի 6-րդ գլխում՝ Թվց 27:21, Ա Թգ 22:10, 23:9-10, Բ Թգ 2:1:

Բ. Եթե Հին Կտակարանը դիտարկենք իր ողջ շրջանակով, Սինա լեռան մոտ Աստված ամուսնացավ Իսրայելի հետ՝ Ելց 20:6, ծթգ 2.

1. Իր պատկերացման և ցանկության համաձայն՝ Աստված ուզում էր Իսրայելի համար Ամուսին լինել, և Նա ցանկանում էր, որ Իսրայելն Իր համար կին լինի, որն Իր հետ կապրեր ամենամտերմիկ շփման մեջ այս սքանչելի ամուսնական միության մեջ:
2. Պատմության գրքերը գրելիս Սամուելը Դատավորաց գիրքը դրեց Հեսուի գրքից հետո, որպեսզի ցույց տար, թե Իսրայելն ինչպիսի կյանքով էր ապրում իր Ամուսնու հանդեպ:
3. Ինչպես բացահայտված է Դատավորաց գրքում, Իսրայելի սրտում Եհովայի կինը լինելու ցանկություն չկար. ընդհակառակը, նա թողեց Աստծուն՝ որպես իր Ամուսնու, և անառակաբար ուրիշ աստվածների հետևից գնաց ու նրանց երկրպագեց՝ 2:11-13, 17, 3:7, 8:33, 10:6, հմմտ Երմ 11:13, Եզկ 16:25-26, Օվս 1:2, 2:2:

Գ. Դտվ 1:1-20-ում Հուդայի և Քաղեբի մասին գրառումից հետո Իսրայելի՝ այս գրքում բերված պատմությունը լի է պոռնիկին հատուկ փչացածությամբ և ապականությամբ.

1. Հեսուի գիրքը Իսրայելի պատմության գիրքն է՝ լի Քանանի բնակիչների հանդեպ սքանչելի հաղթանակներով Եհովայի ներկայության մեջ, մինչդեռ Դատավորաց գիրքը Իսրայելի պատմության գիրքն է, որ լի է իրենց թշնամիների հասցրած նվաստացուցիչ պարտություններով Եհովային թողնելու մեջ:
2. Սա է Դատավորաց գրքի խորքային նշանակությունը:

Դ. Դատավորաց գրքի բովանդակությունն այսպիսին է. Իսրայելի զավակներն ապավինում են Աստծուն, թողնում են Աստծուն, պարտություն են կրում իրենց թշնամիներից, իրենց թշվառության մեջ ապաշխարում են առ Աստված, ազատվում են դատավորների միջոցով և դարձյալ

ապականված են դառնում. Սա Դատավորաց գրքում յոթ անգամ կրկնվող շրջափուլ դարձավ՝ 1:1-2, 2:11–3:11:

II. Դատավորաց գրքի 2:1-ը խոսում է Եհովայի Հրեշտակի մասին՝ 5:23, Թվց 22:22.

Ա. Եհովայի Հրեշտակն Աստված Ինքն է Իր Աստվածային Երրորդության մեջ, որ որպես Ծառա ծառայում է Իր ընտրյալներին՝ հմմտ Եբր 1:14:

Բ. Եռամեկ Աստծու մարմնավորումը Քրիստոսն է, և Քրիստոսը Եհովայի Հրեշտակն է, ով Հին Կտակարանում հոգում էր Իսրայելի համար որպես Եհովան գործողության մեջ՝ Ելց 3:2, ծթգ 1:

Գ. Այն, որ Քրիստոսը Եհովայի Հրեշտակն է, նշանակում է, որ Աստված Ինքն Իրեն Իր Աստվածային Երրորդության մեջ նշանակել և հանձնարարել է գործել՝ հոգալով Իր ժողովրդի համար:

Դ. Քանի որ Իսրայելը պատշաճ կնոջ պես չէր վարվում, Եհովան Ինքը՝ որպես Ամուսին, Գլուխ և Իսրայելի Թագավոր, Իր կնոջ համար Ծառա դարձավ.

1. Եհովան նրա մոտ եկավ ոչ թե որպես Ամուսին, Գլուխ կամ Թագավոր, այլ որպես Եհովայի Հրեշտակ, ով ուղարկվել էր Եհովայի կողմից՝ Զք 2:9-11:
2. Քանի որ Իսրայելը Եհովային չէր պատվում որպես Գլխի, Նա Ծառա դարձավ՝ նրան ծառայելու պատրաստ. Դտվ 2:1-3-ում Իսրայելին ուղղված Նրա խոսքը ոչ թե կշտամբանք կամ հրահանգ էր, այլ ծառայի հորդոր:

III. Դատավորաց գրքի 17 և 18-րդ գլուխները բացահայտում են Իսրայելի ուրացությունը Աստծուն երկրպագելու մեջ.

Ա. Ուրացությունը նշանակում է թողնել Աստծու ճանապարհն ու մեկ ուրիշ ճանապարհով ընթանալ՝ հետևելու համար Աստծուց զատ այլ բաների, և դա Հիսուս Քրիստոսի անվան ներքո և Աստծուն երկրպագելու պատրվակով «ես»-ի համար ինչ-որ բաներ անելն է՝ Գրծ 9:2, 18:26, Բ Պտ 2:2, 15, 21, Հդ 11, Դտվ 18:30-31:

Բ. «Ու այդ մարդը՝ Միքան, աստվածների մի տուն ունեցավ ու եփուդ ու թերափիմ շինեց ու իր որդիներից մեկին նվիրաբերեց, որ իր քահանան լինի»՝ 17:5.

1. Միքայի տունը՝ որպես աստվածների տուն՝ իր կուռքերով (որպես Քրիստոսի փոխարինմամբ), իր եփուդով (որն Աստծու իշխանությունն է ներկայացնում) և իր վարձու քահանայով (որ «կղերականություն-աշխարհականություն» համակարգն է ներկայացնում՝ խխ. 7-13) հանդերձ, պատկերում է այսօր քրիստոնյաների միջավայրում Աստծու երկրպագության առնչությամբ տիրող ուրացողական իրավիճակը:
2. Միքայի մայրն ինչ-որ բան ընծայեց Աստծուն, բայց նրա զոհաբերությունը խառնված էր կռապաշտության թթխմորի հետ (խխ. 1-4).

միևնույն խառնուրդն ու ուրացողական իրավիճակը գոյություն ունի քրիստոնեության մեջ:

3. Մենք կարող ենք Միքայի՝ «աստվածների տան» (խ. 5) նկարը կիրառել քրիստոնեության իրավիճակի հանդեպ:
4. Այսօրվա քրիստոնեությունը բազմաթիվ «միքայի տներ» ունի. Հռոմի կաթոլիկ եկեղեցին, պետական եկեղեցիները, հարանվանությունները և բազմաթիվ անկախ խմբերը «միքայի տներ» են՝ լի կուռքերով՝ որպես Քրիստոսի փոխարինումներով:

Գ. «Դանի զավակներն իրենց համար քանդակված կուռք կանգնեցրին», և նրանք «Միքայի քանդակած կուռքն իրենց համար դրեցին այնքան ժամանակ, քանի դեռ Աստծու տունը Սելովում էր»՝ 18:30-31.

1. Դանի դեպքում ուրացությունը երկրպագության բաժանարար կենտրոն հաստատելն էր՝ 17:9-10, 18:27-31, Գ Թգ 12:26-31:
2. Դանը պատերազմում էր ինչպես մի երիտասարդ առյուծ՝ ավելի շատ հող ձեռք բերելու համար (ինչը խորհրդապատկերում է Քրիստոսին), բայց հաջողության հասնելուց և հաղթանակ շահելուց հետո նա դարձավ հպարտ, անհատապաշտական ու անկախ՝ Երկ Օր 33:22, Հս 19:47, Դտվ 18:27-31:
3. Այն, ինչ ձեռք բերեցին Դանի հետնորդները, նրանց հպարտ ու անկախ դարձրեց՝ Տիրոջ սահմանածին ենթարկվել չկամեցող՝ խխ. 1-31, Երկ Օր 12:5, 8.
   ա. Քանի որ Դանը հաջողության էր հասել, նա հպարտացավ ու անհատապաշտական դարձավ. նա հոգում էր միայն իր համար, ոչ ուրիշների՝ 33:22, Դտվ 18:27-31:
   բ. Դանի ուրացության աղբյուրն այլ ցեղերի համար չհոգալն էր. Մարմնի այլ մասերի համար չհոգալը ուրացության աղբյուրն է:
4. Իսրայելի պատմության ընթացքում ոչինչ ավելի մեղսալի ու Աստծու ժողովրդին ավելի վնասող չի եղել, որքան Դանի ուրացությունն այն բանում, որ նա երկրպագության բաժանարար կենտրոն հաստատեց՝ Ծնդ 49:16-18, Երկ Օր 33:22, Դտվ 18:1, 30-31:
5. Յուրաքանչյուր բաժանարար կենտրոն հաստատվում է ինչ-որ մեկի սեփական շահերի համար. նման կիրարկումը ոչ միայն բաժանություն է առաջացնում, այլև մրցակցություն՝ խխ. 1, 13-31, Ծնդ 49:16-18, Երկ Օր 33:22.
   ա. Խորանը Սելովում էր, իսկ քանդակված պատկերը՝ Դանի մեջ՝ Հս 18:1:
   բ. «Քանդակած կուռքն իրենց համար դրեցին այնքան ժամանակ, քանի դեռ Աստծու տունը Սելովում էր»՝ Դտվ 18:31, Ա Թգ 1:3:
6. Քրիստոնեության պատմության մեջ բազմաթիվ «դաներ» են եղել, որոնք չեն կամեցել ենթարկվել ուրիշներին, այլ երկրպագության այլ կենտրոն են հաստատել՝ Դտվ 18:1, 13-31:

7. Ուրացության մեջ ընկնելու վտանգից ապահովագրվելու լավագույն միջոցը ամբողջ Մարմնի համար և Տիրոջ մեկ աշխատանքի մեջ Տիրոջ եզակի վկայության համար հոգալն է՝ Ա Կրթ 10:17, 12:12, 27:

Դ. Աստվածաշնչում ծանրակշիռ մարգարեություն կա, որ նախքան Տիրոջ վերադարձը Իր մարդկանց միջավայրում մեծ ուրացություն է լինելու՝ Բ Թսղ 2:3.

1. Տիրոջ վերադարձի օրը չի գա, մինչև նախ ուրացությունը չգա՝ խխ. 2-3:
2. Այս ուրացությունը լինելու է Գրվածքներում բացահայտված Աստծու տնտեսության ուղիղ ճանապարհից մի կողմ ընկնելը՝ Ա Տմթ 1:4, Եփս 1:10, 3:9:
3. Նույնիսկ այսօր որոշ քրիստոնյաների միջավայրում Նոր Կտակարանի ուղիղ ճանապարհը թողնելու միտում կա՝ Բ Պտ 2:15:

Ե. Պետրոսի երկրորդ թղթի ֆոնն ու հոգսը ուրացությունն է՝ Աստծու ճշմարտության ճիշտ ուղղությունից շեղվելը՝ 2:1.

1. Ուրացությունը հավատացյալներին շեղել էր Աստծու տնտեսությունից՝ նրանց տանելով դեպի խճճող փիլիսոփայությունների մարդկային տրամաբանությունը՝ Կղս 2:8:
2. Ուրացողների ուսմունքները հավատացյալներին ուղղորդում էին ոչ թե դեպի կյանք տվող կյանքի ծառին հաղորդ լինելը, այլ դեպի մահ բերող գիտության ծառին մասնակցելը՝ Ծնդ 2:9, 16-17, Բ Կրթ 11:2-3, 12-15:
3. Ուրացության դեմ պայքարելիս Պետրոսի օգտագործած հակաթույնը կյանքի ապահովումն ու ճշմարտության հայտնությունն էր՝ Բ Պտ 1:3-21.
   ա. 3-ից 11-րդ խոսքերում Պետրոսն օգտագործեց աստվածային կյանքի ապահովումը պատշաճ քրիստոնեական կյանքի համար, որպեսզի հավատացյալներին «պատվաստի» ուրացության դեմ:
   բ. 12-ից 21-րդ խոսքերում նա օգտագործեց աստվածային ճշմարտության հայտնությունը, որպեսզի հավատացյալներին «պատվաստի» ուրացության մեջ եղող հերձվածողության դեմ՝ 2:1, ծթգ 3:
4. Քանի որ այսօրվա քրիստոնեությունը լցված է ուրացությամբ, Տիրոջը վերականգնում է անհրաժեշտ՝ կյանքի և ճշմարտության վերականգնում՝ Հվի 1:4, 8:12, 10:10բ, 14:6, Հյտ 2:4, 15:

Զ. Այսօր՝ ուրացության ժամանակներում, մենք պետք է վկայենք Աստծու մաքուր Խոսքի լիակատար հայտնության մասին և պայքարենք Աստծու Խոսքում բացահայտված ավելի խոր ճշմարտությունների համար, ներառյալ՝

1. Աստծու հավիտենական տնտեսության վերաբերյալ հայտնությունը՝ Եփս 1:10, 3:9:

2. Աստվածային Երրորդության վերաբերյալ հայտնությունը՝ Բ Կրթ 13:14, Հյտ 1:4-5:
3. Համաբովանդակ Քրիստոսի անձի և աշխատանքի վերաբերյալ հայտնությունը՝ Կղս 2:9, 16-17, 3:11:
4. Ավարտունացած կենդանարար Հոգու վերաբերյալ հայտնությունը՝ Հվի 7:39, Ա Կրթ 15:45բ, Հյտ 22:17:
5. Աստծու հավիտենական կյանքի վերաբերյալ հայտնությունը՝ Հվի 3:15-16:
6. Քրիստոսի Մարմնի, այսինքն՝ Աստծու եկեղեցու վերաբերյալ հայտնությունը՝ Եփս 1:22-23, Ա Կրթ 12:12-13, 27, 10:32:

©2021 *LivingStreamMinistry*